Կպչ գրքի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 10-01/18

Ավտոտրանսպորտային միջոցների
տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման

ք. Մարտունի « 10. » __01__ 2018 թ.

«Գավառի ԲԿ» ՓԲԸ այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս տնօրեն Ա.Կարապետյանի, որը գործում է ըստ կանոնադրության, մի կողմից, և «Մարտունու Ավտոտեխսպասարկման կայան» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ա. Հակոբյանի, որը գործում է ըստ կանոնադրության, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևալի մասին.

1. *Պայմանագրի առարկան*

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է կատարել «Գավառի ԲԿ» ՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող Տրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգման և սպասարկման աշխատանքները իր պահեստամասերով:
1.2 Պատվիրատուն պարտավորվում է 1.1 կետում նշված ծառայությունների և տեղադրված պահեստամասերի համար վճարել սույն պայմանագրի 4-րդ կետում սահմանված կարգով և չափով:

2. *Կողմերի իրավունքները և պարտականությունները*

Կատարողը՝
ա) մատուցում է սույն պայմանագրի 1 կետում նախատեսված ծառայությունները Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Կամոյի 44 հասցեում գտնվող ավտոտեխսպասարկման կայանում,
բ) ծառայությունները մատուցում է Պատվիրատուի հայտերի հիման վրա,
գ) ինքնուրույն որոշում է ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ մասնագետների քանակը, ինչպես նաև կազմում է նրանց աշխատանքների գրաֆիկը,
դ) պարտավոր է ծառայությունները մատուցել պատշաճ որակով,
ե) պատվիրատուին ժամանակին հաղորդել ծառայությունների կատարման մասին անհրաժեշտ տեղեկատվություն,
զ) պատվիրատուի պահանջով հինգ օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները:

Պատվիրատուն՝
ա) կատարողի ծառայությունների համար վճարում է սույն պայմանագրի 4-րդ կետում սահմանված չափով և ժամկետներում,
բ) ցանկացած ժամանակ իրավունք ունի ստուգել կատարողի ծառայությունների ընթացքը և որակը առանց միջամտելու նրա գործունեությանը,

3. *Մատուցված ծառայությունների հանձնման ընդունման կարգը*

3.1 Աշխատանքների ավարտից հետո անմիջապես Կատարողը Պատվիրատուին ներկայացնում է մատուցված ծառայությունների հանձնման –ընդունման ակտ:
3.2 Ակտում նշվում են՝
ա) մատուցված ծառայությունների անվանացանկը,
բ) մատուցված ծառայությունների արժեքը,
գ) ծառայությունների որակը,
դ) տեղադրված պահեստամասերի արժեքը:
Ակտում կարող է ներառվել ցանկացած այլ տեղեկություններ, որոնց մասին Կողմերը անհրաժեշտ կհամարեն նշել:

50110000

4. Վճարումների չափը և կարգը

4.1 Մատուցված ծառայություններ և տեղադրված պահեստամասերի համար վճարումները կատարվում են փոխադարձ համաձայնությամբ՝ հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից ոչ ուշ, քան _2__ օր հետո, հաշվարկային փաստաթղթերի հիման վրա:
4.2 Կատարվող աշխատանքների և պահեստամասերի արժեքը կազմում է 950000 (Ինը հարյուր հիսուն հազար) դրամ:
3 Պատվիրատուի կողմից վճարումը կատարվում է անկանխիկ եղանակով՝ Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1 Կատարողը իր պարտականությունների կատարմանը ձեռնամուխ է լինում սույն պայմանագրի ստորագրման պահից մեկ օրվա ընթացքում:
5.2 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 31-ը դեկտեմբերի 2018թ.
5.3 Սույն պայմանագիրը ժամկետից շուտ կարող է լուծարվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս կողմին _5_ օր առաջ նախազգուշացնելով:

6. Այլ պայմաններ

6.1 Պայմանագիրը կարող է լրացվել և փոփոխվել Կողմերի համաձայնությամբ:
6.2 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտականությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով
6.3 Սույն պայմանագիրը կնքված է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

7 Կողմերի հասցեները և բանկային վավերապայմանները

«Պատվիրատու»	«Կատարող»
«Գավառի ԲԿ» ՓԲԸ	«Մարտունու Ավտոտեխսպասարկման կայան» ՍՊԸ
Հասցեն – ք. Գավառ, Ազատության 21	Հասցեն ք. Մարտունի Կամոյի 44
Բանկ «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ» բանկ» ՓԲԸ	Բանկ «Արդշինբանկ» ՓԲԸ Մարտունու մ/ճ
Հ/Հ 22008514032900	Հ/Հ 2476603809210000
ՀՎՀՀ 08417304	ՀՎՀՀ 08206326
Տնօրեն _____ Ա. Կարապետյան	Տնօրեն _____ Ա. Հակոբյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
«10» 01 2018թ.	«10» 01 2018թ.
Կ.Տ.	